

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. Յ. ԱՒԳԵՐ. - Մեմնոն և Զարմայր զոյգ մը զիւ-
ցական առասպելներ թէ արդեօք միակ
պատմական անձնաւորութիւն . . . 197

ՊԱՏՄԱԿԱՆ

Հ. Ս. ՏԷՐ-ՄՈՎՍԵՍԻԱՆ. - Յունական տիրապե-
տութիւնը . . . 205

ԳՐԱԿԱՆ

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ.
Փոքրիկ Տերմայր . . . 210
Պարսկերէն . . . 211
Յանտութիւն . . . 211

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԽՄԲ. - Հայաստանի Գիտ. Ակադեմիան և Ս. Վա-
զարի Հայկ. Ճեմարանը . . . 212

ՀՍՍՌ. Գիտութիւններու Ակադեմիային
նամակը ուղղութեամբ Ս. Վազարի Հայկ. Ճե-
մարանին . . . 214

ԽՄԲ. - Հայաստանի Գիտ. Ակադեմիային 23 Ակա-
դեմիկոսները . . . 218

ԽՄԲ. - Փրոֆ. Գ. Արով՝ Տեսուչ Հայաստանի
Զեռագրաց Մատենադարանին . . . 223

ՓՐՈՅ. Գ. ԱՐՈՎ. - Հայ Կուլտուրայի մեծ գան-
ձարանը . . . 224

ԼՈՅՍ ՏԵՍԱԼԻ

Ս Ե Ւ Ա Ն
Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ր Ա Ն Գ Տ Ա Ր Ի

ՊԱՏՄԱԿԱՆ

ACADEMIE ARMENIENNE - PHILOLOGIQUE

P. J. Aucher. - Memnon et Zarmayr sont-ils
deux légendes mythologiques ou bien
un seul personnage historique ? . 197

HISTORIQUE

P. S. Der-Movsessian. - La domination
grecque . . . 205

LITTERAIRE

P. V. Hovhannessian.
La petite Madone (poésie) . . . 210
L'illusion . . . 211
Au Revoir . . . 211

DIVERS


Réd. - L'Académie des Sciences de l'Ar-
ménie et l'Académie Arménienne de
St. Lazare . . . 212

La lettre de l'Académie des Sciences
de l'Arménie adressée à l'Académie
Arm. de St. Lazare . . . 214

Réd. - Les 23 Académiciens de l'Académie
des Sciences en Arménie . . . 218

Réd. - Prof. K. Apov, Directeur de la Biblio-
thèque des manuscrits en Arménie 223

Prof. K. Apov. - Le grand trésor de la cul-
ture arménienne . . . 224



ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ՄԵՄՆՈՆ ԵՒ ԶԱՐՄԱՅՐ
ԶՈՅԳ ՄԸ ԴԻԻՑԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ ԹԷ ԱՐԴԵՕՔ
ՄԻԱԿ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՁՆԱԿՈՐՈՒԹԻՒՆ

ՀԱՐԿԱՌՈՐ Է մտքի թռիչք մը՝ երեւա-
կայութեան թեւերու վրայ բարձրա-
նալու համար դարերու գաղափարաբանողներ
վեր և սաւառներու երջանկութեան շրջանին
այն մակարդակին մէջ, ուր մարդկութիւնը
տակաւին կ'ապրէր աստուածներու հետ ա-
րեւակցական ազնուականութեամբ և մտեր-
մական կենակցութեան ամէնօրեայ յարա-
բերութեան մէջ. այն ժամանակ՝ երբ տա-
կաւին քննադատութիւնը ծնած չէր և պատ-
մութիւնը ճշմարտութիւնը ստուգելու կարո-
տը չէր զգացած, և բանաստեղծները ազատ
խոյանքով կը յօրինէին իրենց զիւցաղուն-
ները՝ ապազայ դարերու ուղեցոյց օրինակ-
ներ և առաջնորդներ ստեղծելու համար
զանոնք։ Այն ժամանակ՝ երբ դեռ կ'ապրէին
մարդիկ սուր յիշողութեամբ որ կրնային

իրենց աշխարհացոյցներուն վրայ գծագրել
երջանկութեան լիւսեան գաղափար և նշանա-
կել զժողովրդի մուտքին դրան տեղը և կը
ճանչնային զանազանք փոփոխութեան
ուսից կ'անցնէին երազները մահկանացու-
ներու քունը զուարթացնելու համար։

Փոխադրութիւնք Քրիստոսէ տառերեք դա-
րեր առաջ։ Հոմերոսի սուր բերը և մեր
ծերունի խորհրդացի Մովսէսին սուր միաբը
միայն կարող էին այդ աղօտ մթնոլորտին
մէջ թափանցել և հոն որսալ Մեմնոն մը՝
Եթովպիոյ թագաւոր, որ իր և Ասորեստանի
զօրաց զոհերով կը զիմէ Տրոյիոյ ազա-
տութեան. և Զարմայր մը՝ Հայաստանի
թագաւոր, որ Եթովպացի և Հայ բանակով
կ'արշաւէ դէպի Տրոյիոյ Պրիամոսի օգնու-
թեան. և հոն երկու վեհ զիւցաղներն ալ,
թեան. և հոն երկու վեհ զիւցաղներն ալ,

ԲԱՑՄԱՎԷՊ



7095-44
885-73

կամը, Հեղին դիւցազնը վրիժառու զայրու-
թով կը յարձակի անոր վրայ և մինչ երկու
վեհազանց մենամարտը կը մղուի սաստիկ-
ութեամբ, Արամազդ աստուածներու ժողովին
մէջ կշիռքի կը գնէ երկու քաջերու հոգին
կամ բախտը և Մեմնոնի նժարը կը ծան-
րանայ, անխուսափելի մահուան գուշակու-
թեամբ՝ նախ Մեմնոնի, որուն շուտով պիտի
յաջորդէ նաեւ Աքիլլէսի մահը։ Արշալոյս
կու լայ իր որդւոյն մահը և այնուհետեւ
անոր արտասուած շիթերը իրրեւ ցօղ ամէն
առաւօտ կը սփռուին մարգագետնի և ծա-
ղիկներու վրայ։

Այս տխուր տեսարանին վրայ, կ'ըսէ
Ուիլիզիոս, տփուկեցաւ այն բոսորային և
վառ կարմիր գոյնը որ կը փայլի երբ ար-
շալոյսը ծագի և երկինքը մնայ ամպամած։
Մինչ խարոյկը կը վառէր, ուր աստուա-
ծուհւոյ որդին պիտի աճիւնանար, Արշալոյս
զիսախուր և արտասուած թոր աչքերով ինկու-
Արամազդի ոտքը։ Ինչպէս թախանձելով
որ առանձնաշնորհալ պատիւ մը զանազանէ
իւր որդին ուրիշ մահկանացուներէ և առ-
տուածներու հայրը կատարեց աղաչանքը
տալով անոր միշտ վերանորոգուած անմա-
հութիւն տարուէ տարի։ Անմիջապէս բու-
ցավառ խարոյկը կործանեցաւ, ծուխի ոլոր-
տապտոյտ մանուածաւալ ալիքներէն, որ
օդը կը մթաղնէին, և խտացած մոխրակոյ-
տէն՝ մարմին մը կազմուեցաւ, կրակէն առաւ
ջերմութիւն և կեանք և ձեւացան անօր
հրեղէն թեւեր։ Վայրկեան մը վերջ տես-
նուեցաւ անթիւ բազմութիւնը թռչուններու,
որոնք ամէնքը միաձայն ողբերգներով սլա-
ցան մոխիրներէն վեր ու երեք անգամ
խարոյկին շուրջը սաւառնելէն վերջ չորրորդ
անգամուն բաժնուեցան երկու խումբի և
իրարու դէմ մաքառեցան այնքան կատա-
ղութեամբ և յամառութեամբ, որ ամէնքը
ինկան խարոյկին շուրջը իրրեւ գոհեր ող-
ջակիցուած այն մոխրակոյտին՝ ուսկից ելած
էին, ցուցնելով որ քաջագունի մը ծնունդն
էին և կոչուեցան Մեմնոնեանք կամ Մեմնո-

նեան թռչուններ։ Ամէն տարի կու գան մի
և նոյն տեղը դիւցազին գերեզմանը պա-
տուելու։ Պաւսանիաս խօսելով այս թռչուն-
ներուն վրայ կ'աւանդէ որ տեղացի բնա-
կիւնները կ'ապահովցնեն որ ամէն տարի կու
գան իրենց թեւերով կը սրբեն կը մաքրեն
խոտերէ և տատասկէ՝ գերեզմանին հողա-
կոյտը, ուր չեն թողուր որ աճի ոչ ծառ և
ոչ խոտ, և յետոյ թաթխելով իրենց թեւերը
մերձակայ Եսթրոս գետին ջուրերուն մէջ՝
կու գան կը սրսկեն ու կը ցօղեն դամբանին
վրայ։

Շատ դարեր վերջ երբ Յոյն ուղեւորներ
ճանապարհորդեցին դէպի Եգիպտոս, տեսան
Թեբէի քով հսկայական արձան մը Ամեն-
փիս թագաւորին և համարեցան (կամ անուա-
նեցին) զայն իրրեւ Մեմնոնի յուշարձան, որ
յետոյ եղաւ աշխարհիս ամէնէն հետաքր-
քրական սքանչելեաց մին, մինչեւ իսկ Ա-
դրիանոս կայսրը և Սաբինա կայսրուհին
յատկապէս ճամբորդութիւն մ'ըրին մինչեւ
վերին Եգիպտոս զայն տեսնելու համար,
հրապուրուած անոր զարմանազործ ձայնի
համբաւէն։ Վտան զի երբ Կամբիսի պարսից
արշաւանքով կամ երկրաշարժէ մը (27 Ն. Ք.)
կործանեցաւ արձանին գլուխը, ամէն ա-
ռաւօտ արշալոյսի ծագելուն՝ ներդաշնակ
ձայներ կը լսուէին քնարի մը թեւերու
կտնտոցի նման, և այս համարուեցաւ իրրեւ
առաւօտեան առաջին սիրոյ ողջունատու-
թիւնը արշալոյս աստուածուհւոյն և իր
տարարախտ որդւոյն Մեմնոնի՝ արեւու
ճառագայթներու մէջ։ Այս ներդաշնակ
ձայները դադրեցան երբ Սեղիմոս Սեւերոս
հռոմայեցի կայսրը ուղեց վերանորոգել ար-
ձանին ջախջախուած գլուխը։ Եսթրիոս
կ'աւանդէ հիններու գաղափարը այս լուա-
թիւնը նկատելով իրրեւ ազդեցութիւն մը
քրիստոնէական հաւատքի ճշմարտութեան,
որ կը լսեցնէ հեթանոսական պատգամները։
Չայնական երեւոյթը զոր բոլոր լուրջ հեղի-
նական (Ստրաբոն և այլք) կը հաստատեն
անձամբ լսած ըլլալով, անտարակոյս բնա-

կան արդիւնք մըն էր գիշերային խոնաւու-
թեան՝ որ թափանցելով մարմարի ծակտիք-
ներուն մէջ արեգական ճառագայթներու
ջերմութեամբ կը սկսէին աննկատելի կեր-
պով պղպշակել նուրբ խոռոչներու մէջ։
Այսպիսի առասպելական տեղեկութիւններ
ահա քաղուած են Հոմերոսի, Հեսիոդոսի,
Ապոլոնիոսի, Աթենիոնի, Գարեհ կամ
Տարիոսի, ցնորարան Ծեսեսի և մանաւանդ
Արքիմոս Միլետացւոյ գործերուն մէջ։
Արքիմոս հեղինակն է « Եթովպական »
կոչուած ընդարձակ դիւցազնեղբայրական քեր-
թուածի մը, ինչպէս նաեւ Իլիոնի կործան-
ման և այլ մանր քերթութեանց։ Իրեն կը
համարուի հնութեան մէջ ուրիշ նշանաւոր
դիւցազնեղբայրութիւն մըն ալ Տիտանամարտ
անուամբ՝ որ կորսուած է։ Նոյնպէս նաեւ
քաղուած են Քուինդոս Չմիւռնացւոյ « Մնո-
ցորդը հոմերականք » գործէն և հոմերա-
կան պարունակի ուրիշ քերթողական հեղի-
նականներու գործերուն մնացորդ պատմակի-
ններէ, և բաւական կը համարինք ընդհանուր
գաղափար մը կազմելու համար հնութեան
մէջ Մեմնոնի գրաւած դիրքին և ազդեցու-
թեան նկատմամբ։ Թողով այլեւս դիցա-
բանական այս առասպելալ հիւստեածքը՝
անցնինք նկատելու զՄեմնոն պատմական
մարմնաւորութեան մէջ, ինչպէս լուրջ հե-
ղինական հնութեան դարերէ ի վեր կրցած
են զինքը ճանչնալ և աւանդել։

ՄԵՄՆՈՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՌՁԵԻ

Պատմութեան առջեւ Մեմնոն մեզի նման
սոսկական մահկանացու մըն է։ Հայրը Տիթոն
պայազատն է Տրոյիոյ թագաւորական ազ-
գատոհմի և արքայական գաւազանի իրաւա-
կան ժառանգորդ, եթէ ինքնայոժար հեռացած
էր իր հայրենիքէն զինուորական բախտի և
պատերազմներու քաջագործութեանց հե-
ռանկարով խանդավառուած։ որով պետու-
թեան թափուր մնացած գահը աւանդուած
էր իր կրտսեր և ըստ ոմանց՝ տարբեր մօրմէ

ծնած եղբորը՝ Պրիամոս։ Տիթոն պատանե-
կութենէն ի վեր սաստիկ սիրահար որսոր-
դութեան, վաղայարոյց և չարքաշ աշխու-
ժութեամբ սաստիկ զօրաւոր և արի բնութիւն
մը ստացած էր։ Վարժ և փորձուած ամէն
տեսակ յոգնութեանց տուաւ ինքզինքը պա-
տերազմական մարզանքներու և եղաւ քա-
ջամուտ զինուորական արուեստի և մտաւ
ասորեստանի բանակին ծառայութեան. ու-
րովհետեւ այն ժամանակ ամէնէն աւելի
պատերազմի և զինուորութեան մէջ նշա-
նաւորն էին ասորեստանցիք, որով և բոլոր
արեւելքի տիրապետողներ։ Քիչ ժամա-
նակի մէջ իր քաջութեամբ և կենցաղավա-
րութեամբ բարձրացաւ բանակի առաջնա-
կարգ աստիճաններու և այնպիսի դիւ-
ցազնական արիութեամբ վարուեցաւ միշտ
որ դասուեցաւ տիտաններու խումբին մէջ։
Տիտանները ասորեստանեան տիրապետու-
թեան գլխաւոր իշխաններն էին և կար-
գուեցաւ կուսակալ կառավարիչ Պարսկա-
տանի։ Այս պաշտօնին մէջ էր՝ երբ լսեց
որ իր հայրենիքը Փոլիզիա ասպատակած
էին Յոյները և Ասորեստանի թագաւորէն,
Տեւտամոսէն, որ զինքը ամենամեծ յարգողն
էր, հրաման ստացաւ իւր որդին Մեմնոնը
քաջ զինուորներու բանակով մը Տրոյիոյ
օգնութեան զրկելու։ Այս առաքումը եղաւ
երկուքին համար ալ մահաոխիթ, որովհետեւ
Մեմնոն մեռաւ դարանակալ Թեսաղացիներու
և Աքիլլէսի ձեռքով։ Իսկ Տիթոն իր խոր
ալեւոյթ հասակին մէջ գտնուելով և չկա-
րենալով հանդուրժել որդւոյն մահուան ցաւն
ու կսկիծը՝ քիչ յետոյ կնքեց իւր կեանքը։
Տիթոնի քաջագործութեանց համբաւը, իւր
գիմագծին և առոյգ կազմուածքին բացառիկ
զեղեցկութիւնն ու կորովը, երկարակեաց
ծերութիւնը և այնքան ցաւալի մահը, առիթ
տուին բոլոր զիցարանական առասպելներու
հիւստեածքին ժողովրդեան երեւակայութեան
և գուսաններու երգերու մէջ։ Ստրաբոն և
Հերոդոտոս կ'աւանդեն որ Մեմնոնի մայրն
ալ, հեռու աստուածուհի մը ըլլալէ, Կողքիսի

